ՀԱՅՏԱՐԱՐՎՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԵՐԻ ՀԱՄԱՐ

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Հարցաշարերը հրապարակված են edu.nk.am կայքէջում և «Լուսարար» պաշտոնաթերթում:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1.Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է: (Ձև 1)

2.Փաստաթուղթ (դիպլոմ) «Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ.

3.Անձնագրի պատճենը,

4.Ինքնակենսագրություն (Ձև 4),

5.Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),

6.Մեկ լուսանկար՝ 3×4 չափի,

7.Այլ պետությունների քաղաքացիները՝ Արցախի Հանրապետությունում աշխատելու իրավունքը փաստող վկայագիր,

8.Արցախի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև հունվարի 31-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից՝ համապատասխան հանրակրթական ուսումնական հաստատությունում: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթները տեղի կունենան 2023 թվականի փետրվարի 1-7-ը ընկած ժամանակահատվածում:

Մանրամասն տեղեկությունների համար դիմել համապատասխան ուսումնական հաստատություն:

Հ/Հ	Հաստատությունը	Առարկան	Ժամաքանակը
		բ. Ստեփանակերտ	
	Ստեփանակերտի Ա. Սախարովի անվան հ. 8 միջնակարգ հոսքային դպրոց	դաստիարակ	1 հաստիք
	Ստեփանակերտի հ.6 մանկապարտեզ	երաժշտական ղեկավար	0,75 հաստիք
		Մարտունու շրջան	
	Մարտունու N 1 մհ/դ	պատմություն	12,5
		զինղեկ	1 հաստիք
	Կոլխոզաշենի մ/դ	մաթեմատիկա	6
	Մարտունու հ. 2հ/դ	ֆրանսերեն	8
		Մարտակերտի շրջան	
	Մարտակերտի թիվ 1 մ/դ	ռուսաց լեզու	21
	Մաղավուզի մ/դ	ՆԶՊ	1 հաստիք
	Հարությունագոմերի մ/դ	մաթեմատիկա	14
	Վարնկաթաղի մ/ճ	հայոց լեզու և գրականություն	12
		անգլերեն	6
	Հաթերքի մ/դ	պատմություն	21
		Ասկերանի շրջան	
	Նորագյուղի մ/դ	դասվար	14
	Նախիջևանիկի մ/դ	դասվար	19
	Դահրավի մ/դ	դասվար	15
		Շուշիի շրջան	
	Շուշիի պետական մանկապարտեզ	դաստիարակ	0,775